ՊՐԵՄԻՈՒՄ ԻՆՎԵՍԹ ՍՊԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 14/07/26-009

ՊՐԵՄԻՈՒՄ ԻՆՎԵՍԹ ՍՊԸ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 հուլիսի 2026թ.

Ղեկավարվելով Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ կանոնադրությամբ՝ ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների սակագները նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել 20.04.2026թ թիվ 20/04/26/-002 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 22 հուլիսի 2026թ-ից:

Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ

Գործադիր տնօրեն՝

Դավիթ Հարությունյան

Հավելված 1
Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ
գործադիր տնօրենի
14.07.2026թ թիվ 14/07/26-
009 որոշման

Բրոքերային ծառայությունների սակագներ	
Բրոքերային հաշվի սպասարկում	
Հաշվի բացում	Անվճար
Հաշվի սպասարկում	Անվճար
Հաշվի փակում	Անվճար
«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում հաշվի բացման միջնորդություն	Անվճար
Հաշվին գումարի մուտքագրում	Անվճար
ՀՀ ռեզիդենտների համար «Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ-ից գումարի դուրսբերում ՀՀ դրամով հայաստանյան բանկերում բացված հաշիվների	Անվճար
ՀՀ ռեզիդենտների համար «Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ-ից գումարի դուրսբերում արտարժույթով հայաստանյան բանկերում բացված հաշիվների	10000 ՀՀ դրամ
ՀՀ ռեզիդենտների համար «Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ-ից գումարի դուրսբերում արտարժույթով արտասահմանյան բանկերում բացված հաշիվների	0.15%, նվազագույնը 10,000 ՀՀ դրամ, առավելագույնը 120,000 ՀՀ դրամ
ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձանց համար «Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ-ից գումարի դուրսբերում	Դրամական միջոցները հաշվին մինչև 6 ամիս պահելու դեպքում՝ 2%
ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձանց համար «Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ-ից գումարի դուրսբերում	Դրամական միջոցները հաշվին 6 ամսից ավել պահելու դեպքում՝ 0%
«Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ -ից գումարի դուրսբերում «Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ -ի նախաձեռնությամբ բրոքերային հաշվի փակման կապակցությամբ	Անվճար
Հաշվից գումարի փոխանցում «Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ -ում սպասարկվող այլ հաշվի	Անվճար
Հաշվի մնացորդի վերաբերյալ տեղեկանքի տրամադրում	5,000 ՀՀ դրամ
Հայկական արժեթղթերով գործարքների կատարում	

Բաժնային արժեթղթերով, ՀՀ-ում գրանցված ներդրումային ֆոնդի փայերով գործարքներ ՀՀ ռեզիդենտների համար	Գործարքի ծավալի 0.05%, նվազագույնը 10,000 ՀՀ դրամ
Բաժնային արժեթղթերով, ՀՀ-ում գրանցված ներդրումային ֆոնդի փայերով գործարքներ ՀՀ ոչ ռեզիդենտների համար	Գործարքի ծավալի 0.10%, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ
Պարտքային արժեթղթերով գործարքներ ՀՀ ռեզիդենտների համար	Գործարքի ծավալի 0.07%, նվազագույնը 10,000 ՀՀ դրամ
Պարտքային արժեթղթերով գործարքներ ՀՀ ոչ ռեզիդենտների համար	Գործարքի ծավալի 0.10%, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ
Արժութային փոխարկումների կատարում	
«Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ -ի կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին երրորդ անձանց հետ կնքված գործարքներ	Գործարքի ծավալի 0.1%, նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ Հայաստանի ռեզիդենտների համար և 20,000 դրամ այլ երկրների ռեզիդենտների համար
Արտասահմանյան արժեթղթերով գործարքների կատարում	
Բաժնային արժեթղթերով (բաժնետոմսերը, ֆոնդերի փայերը և բաժնետոմսերի դեպոզիտար ստացականները) գործարքներ, որոնք շրջանառվում են կազմակերպված շուկաներում	Գործարքի ծավալի 0.15%, նվազագույնը 90,000 ՀՀ դրամ
Բաժնային արժեթղթերով (բաժնետոմսերը, ֆոնդերի փայերը և բաժնետոմսերի դեպոզիտար ստացականները) գործարքներ, որոնք չեն շրջանառվում կազմակերպված շուկաներում	Գործարքի ծավալի 0.4%, նվազագույնը՝ 300,000 ՀՀ դրամ
Պարտքային արժեթղթերով (այդ թվում հայկական եվրոպարտատոմսերով) գործարքներ ՀՀ ռեզիդենտների համար	Գործարքի ծավալի 0.15%, նվազագույնը 25,000 ՀՀ դրամ
Պարտքային արժեթղթերով (այդ թվում հայկական եվրոպարտատոմսերով) գործարքներ ՀՀ ոչ ռեզիդենտների համար	Գործարքի ծավալի 0.15%, նվազագույնը 90,000 ՀՀ դրամ
Պահառուական ծառայություններ	
Պահառուական հաշվի բացում և փակում	Անվճար
Արժեթղթերի տարեկան պահառության վճար ՀՀ արժեթղթերի համար	Արժեթղթերի արժեքի 0.04%
Արժեթղթերի տարեկան պահառության վճար ոչ ՀՀ արժեթղթերի համար	Արժեթղթերի արժեքի 0.35%

Արժեթղթերի ներպահառուական փոխանցում	Անվճար
Արժեթղթերի միջպահառուական փոխանցում ՀՀ արժեթղթեր	Արժեթղթերի արժեքի 0.25%
Արժեթղթերի միջպահառուական փոխանցում ոչ ՀՀ արժեթղթեր	Արժեթղթերի արժեքի 0.35%
Արժեթղթերի տեղաբաշխման ծառայություններ	
Արժեթղթերի երաշխավորված տեղաբաշխում	Պայմանագրային (կախված ծառայության էությունից և բարդությունից)
Արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխում	Պայմանագրային (կախված ծառայության էությունից և բարդությունից)

Հատուկ նշումներ

- Սակագները ներառում են բանկերի, կարգավորող շուկայի օպերատորի և հաշվարկաքլիրինգային համակարգի օպերատորի կողմից կիրառվող միջնորդավճարները, բացառությամբ հայկական պետական պարտատոմսերի տեղաբաշխման և հետ գնման աճուրդների ժամանակ միջնորդ բանկերին տրվող միջնորդավճարների:
- Այս սակագները կիրառվում են, եթե «Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ-ի և հաճախորդի միջև այլ համաձայնություն առկա չէ:
- Հաճախորդների միջոցների նկատմամբ այդ միջոցները պահպանման համար բացված բանկային հաշիվները սպասարկող բանկերի կողմից տոկոսների հաշվեգրումից ստացվող եկամուտները, ինչպես նաև այդ հաշիվների սպասարկման հետ կապված ծախսերը կրում է «Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ-ն:
- Նույն պատվերի հիման վրա նույն օրվա ընթացքում կնքված մեկից ավել գործարքների դեպքում նվազագույն սակագինը կիրառվում է մեկ անգամ բոլոր գործարքների միասնական ծավալի նկատմամբ:
- Սույն սակագները կիրառվում են, եթե գործարքի վերջնահաշվարկը կատարվել է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ-ի միջոցով: Վերջնահաշվարկն այլ դեպոզիտարիաների միջոցով իրականացնելու դեպքում «Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ-ն իրավունք ունի կիրառել հավելավճարներ, որոնց արդյունքում հաճախորդից գանձվող միջնորդավճարը կարող է կազմել մինչև 1,000,000.00 ՀՀ դրամ:
- Սույն սակագները չեն ներառում ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) և ենթակա են ԱԱՀ-ով հարկման, եթե ՀՀ օրենսդրությամբ դրանք ազատված չեն ԱԱՀ-ից:
- Ռուսերեն կամ անգլերեն լեզուներով տեղեկանքների տրամադրման դեպքում գանձվում է սակագնի կրկնապատիկը: